ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակի և «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ անցկացված ուսանողական հարցման արդյունքների

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

22.12.2018թ.

Ակադեմիական միջավայրում անազնիվ վարվելակերպին առնչվող տարբեր հետազոտությունների արդյունքներ փաստում են այն մասին, որ տարբեր երկրներում, տարբեր կրթական ոլորտներում ակադեմիական անազնիվ դրսևորումները մշտապես գոյություն ունեցող և զարգացող երևույթներ են: Ակադեմիական անազնվության դրսևորումների զարգացումը մեծ է հատկապես վերջին քսանամյակում, որի համար խթանիչ ուժ է հանդիսացել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն ու նրանց լայն կիրառումը:

Ակադեմիական ազնվությունը կենտրոնական տեղ է գրավում համալսարանի արժեհամակարգում:

Համալսարանը որպես կրթական միջավայր, բացի ուսանողի մեջ մասնագիտական բարձր որակներ ապահովելու խնդրից, նաև հանդիսանում է այն վայրը, որտեղ վերլուծվում և դաստիարակվում են ազնվություն, հարգանք, արդարություն և նմանատիպ այլ մարդկային արժեքներ: Ուստի համալսարանում և՛ դասավանդողները՝ որպես կրթողներ, և՛ ուսանողները՝ որպես կրթվողներ, պարտավորվում են ապահովել ակադեմիական ազնվության նորմերին համապատասխան վարքագիծ, նպաստել համալսարանի բարգավաճմանը, պահպանել ակադեմիական ազնվության սկզբունքները և պատասխանատվություն կրել ազնիվ համալսարան ստեղծելու, պահպանելու համար:

Ակադեմիական ազնվությունը նախատեսում է առանց գրագողության, խաբեության, խարդախության, այլ նյութերից համապատասխան հղումներ ներառող ակադեմիական աշխատանքի կատարումը:

Ակադեմիական աշխատանք համարվում է համալսարանում իրականացված յուրաքանչյուր գործընթաց, որը կատարվում է կրթական ծրագրերի կամ դասընթացների իրականացման հետ կապված ակադեմիական առաջադիմության ապահովման համար (ատենախոսություններ, թեզեր, քննություններ, ստուգարքներ, կիսամյակային ընթացիքկ աշխատանքներ, կուրսային աշխատանքներ, ավարտական աշխատանքներ և այլն):

ԵՊՀ Իջևանի մասնաճյում ակադեմիական ազնվության պահպանման, ակադեմիական անազնվության կանխարգելման նպատակով գործում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ը, որում հստակ սահմանված են ակադեմիական ազնվություն, ակադեմիական անազնվություն գաղափարները, դրանց դրսևորման ձևերը: Այդ փաստաթղթում ներկայացված է ակադեմիական անազնվությունը կանխարգելելու և անազնվության դիմելու դեպքում պատասխանատվության ենթարկելու կարգը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2016-2020թթ զարգացման ռազմավարական ծրագրի 1.2.6. կետի պահանջներից ելնելով (<u>մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմ-ներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու նպատակով</u>) ՄԿՈԱ բաժինը կատարել է ուսումնասիրություն, պարզելու մասնաճյուղում ակադեմիական ազնվության առկա մակարդակից ուսանողների բավարարվածությունը, վեր հանելու ակադեմիական

անազնվության դրսևորումների ու հետևանքների հետ կապված նրանց խնդիրները, հնարավորություն տալ ուսանողներին ներկայացնել իրենց առաջարկները համալսարանական միջավայրում ակադեմիական ազնվության պահպանման և անազնվության դեմ պայքարի համար: Հետազոտությունն անց է կացվել ֆոկուս-խմբի հետ հարցման միջոցով: Հարցումն իրականացվել է ՄԿՈԱ բաժնին կից որակի ներքին ապահովման գործընթացներին աջակցող ուսանողական խմբի կողմից, հարցմանը մասնակցել են 4 ֆակուլտետների 47 ուսանողներ:

Խմբի անդամները բաժնի մասնագետի հետ միասին հանդիպել են ուսանողների հետ:

Հանդիպումը նպատակ ուներ.

- նախ պարզել ուսանողների տեղեկացվածությունը գործող «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ից, կանոնակարգում սահմանված ակադեմիական ազնվության և անազնվության դրույթներից, ակադեմիական անազնվության դրսևորման դեպքում պատասխանատվության երթարկվելու ձևերից,

- ապա նրանց հետ քննարկումների միջոցով բացահայել մասնաճյուղում անազնվության դրսևորման տարածված ձևերը և դրանց դրսևորման դրդապատճառները, պարզել, թե անազնվության դրսևորումների դեմ պայքարելու կանոնակարգում առաջադրված տույժի ձևերը որքանո՞վ են կիրառվում ու նպաստում դրա կանխարգելմանը, որքանո՞վ են այդ ձևերը ընդունելի նրանց կողմից, ի՞նչն է խոչընդոտում մասնաճյուղում ակադեմիական ազնվության պահպանմանը,

- վերջում հավաքագրել ակադեմիական անազնվության դեմ պայքարի նրանց առաջարկները:

Հարցումն անանուն էր, և բաժինն ակնկալում էր, որ դա հնարավորություն կտա ուսանողներին անկեղծ և անկաշկանդ պատասխանել հարցերին, արտահայտել իրենց տեսակետները:

Ըստ «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ի համալսարանի կազմի ցանկացած անդամ (ուսանողներ, աշխատակիցներ) պետք է տեղեկացված լինի կանոնակարգին: Ըստ կանոնկարգի 4.1, 4.2 կետերի, մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները (ֆակուլտետնրի դեկանները, բաժնի վարիչները) իրենց աշխատակիցներին (ուսանողներին) ծանոթացնում են կանոնակարգի հետ, ներկայացնում են ակադեմիական ազնվության չափանիշները, ակադեմիական անազնվության դրսևորումները, ակադեմիական ազնվության խախտման հետևանքները, զգուշացնում, որ ակադեմիական անազնվության կամայական դրսևորում պատժելի է:

Հարցման արդյունքները վկայում են, որ հարցմանը մասնակցած ուսանողների մոտ 94%-ը տեղեկացված է ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգից, սակայն այդ մասին իրազեկվել են ոչ՛ ֆակուլտետի դեկանի կողմից.



Որտեղի՞ց եք ծանոթացել «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգ»- ին	քանակ	տոկոս
դեկանի	4	9%
կուրսղեկի	1	2%
դասախոսների	4	9%
ՄԿՈԱ բաժնի ՈՆԱ աջակցող ուսանողական խմբի	**32**	**68%**
Մասնաճյուղի էլ. կայքի	5	11%

Հարցման մասնակից ուսանողների 68%-ը նշել է, որ ակադեմիական ազնվության կանոնակարգի մասին տեղեկացվել է ՄԿՈԱ բաժնին կից որակի ներքին ապահովմանն աջակցող ուսանողական խմբի կողմից (ըստ երևույթին ուսանողական խմբից տեղեկացվել են հարցմանը մասնակցելուց առաջ, կամ հենց քննարկման ժամանակ): Այսինքն, մինչ այդ հարցման մասնակից ուսանողների մեծամասնությունը տեղեկացված չի եղել ակադեմիական ազնվության կանոնակարգից, ինչը մտահոգության տեղիք է տալիս:



Հարցման արդյունքների վրա կատարելով ընդհանրացում ԵՊՀ Իջևանի մանաճյուղում ակդեմիական ազնվության ներկա մակարդակից ուսանողների բավարարվածությունը կարելի է համարել բավարար: Ընդհանուր առմամբ ակադեմիական ազնվության մակարդակից լիարժեք կամ մասնակի բավարարված են հարցման մասնակից ուսանողների **83%-ը** (նրանցից 64%-ը՝ մասամբ):

Հաշվի առնելով բոլոր կրթական հաստատություններում ակադեմիական անազնվության որոշ դրսևորումների (արտագրության, քննության ընթացքում միմյանց օգնելու, դասախոսների զիջողականության կամ անուշադրության) տարածվածությունը, կարելի է մասնաճյուղի համար նշված արդյունքը համարել բավարար, սակայն անհրաժեշտ է մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ՝ ուսանողների բավարարվածությունը բարձրացնելու համար:

Ուշադրության է արժանի ուսանողների անկեղծ պատասխանն այն հարցին, թե ուսումնառության ընթացքում երբևէ դիմել են անազնվության: Ըստ հարցման արդյունքների հարցմանը մասնակցած ուսանողների **47%-ը** դիմել են ակադեմիական անազնվության, **47%-ը**՝ երբևէ չի դիմել ակադեմիական անազնվության, իսկ **6%-ը**՝ խուսափել են պատասխանել հարցին:



Սակայն այն բաց հարցին, թե ուսումնառության ընթացքում հանդիպե՞լ են երբևէ ակադեմիական անազնվության, հարցմանը մասնակցած ուսանողների մոտ **70%-ը** (33 ուսանող) տվել է դրական պատասխան: Սա իհարկե բավականին մտահոգիչ արդյունք է:

Ակադեմիական անազնվության դրսևորումների ականատեսը լինելու մասին հիմնականում նշել **են հումանիտար գիտությունների ֆակուլտետի և տնտեսագիտական ֆակուլտետի** ուսանողները (այդ ֆակուլտետներից հարցման մասնակից 24 ուսանողների **95%**-ից ավելին): Երկու ֆակելտետների ուսանողները մասնաճյուղում առկա ակադեմիական անազնվության դրսևորումներից շեշտել էին հատկապես արտագրությունը և այլ անձանց հեղինակային աշխատանքների ներկայացումը:

Կիրառական արվեստի ֆակուլտետից հարցման մասնակից 10 ուսանողների գրեթե **40%-ը** նշել են, որ չեն հանդիպել ակադեմիական անազնվության որևէ դրսևորման, իսկ 20%-ը՝ հանդիպել են ակադեմիական անազնվության դրսևորումների: Մեկ մասնակից նշել է կաշառակերության դրսևորման մասին: Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների 40%-ը խուսափել է հարցին պատասխանելուց:

Բնական գիտությունների ֆակուլտետից հարցման մասնակից 13 ուսանողների **62%-ը** նշել է, որ ուսումնառության ընթացքում հանդիպել է ակադեմիական անազնվության և դրա ամենատարածված դրսևորումներից հիմնականում նշել են արտագրությունը, որոշ ուսանողներ բախվել են դասախոսների կողմից կողմնապահության դրսևորմանը և շեշտել են հայկական ասույթ համարվող «խնամի, ծանոթ, բարեկամ» սկզբունքի կիրառելիության փաստը: Բնական գիտությունների ֆակուլտետից հարցմանը մասնակից ուսանողների մյուս մասը՝ 38%-ը նշել է, որ չի հանդիպել ակադեմիական անազնվության որևէ դրսևորման:

Իրենց պատասխաններում ուսանողները փաստել են, որ 2018-19 ուստարում մասնաճյուղում կիրառվել է ակադեմիական ազնվության պահպանման մակարդակը բարձրանելու ուղղությամբ մի շարք քայլեր, մասնավորապես, քննական լսարաններում տեղադրվել են տեսախցիկներ: Սա իհարկե սուբյեկտիվ կարծիք է, եթե հաշվի առնենք, որ մասնակիցներից որոշները գտնում են, որ տեսախցիկների կիրառումը անարդյունավետ չէր:

Հարցման մասնակիցները փաստել են, որ ուսանողներն անազնիվ քայլերի դիմում են հիմնականում դասերին կամ քննություններին անպատրաստ լինելուց, բարձր գնահատական ստանալու միտումից, մրցակցությանը դիմանալու համար, անբավարար գնահատականից խուսափելու համար:

Ըստ հարցման մասնակիցների, ակադեմիական ազնվության պահպանմանը խոչընդոտում են, հիմնականում, դասախոսների կողմից անուշադրությունը, թույլ հսկողությունը, կողմնապահությունը, անազնիվ վերաբերմունքը: Նրանք հատկապես շեշտել են նաև ուսանողների ոչ բավարար գիտելիքները, մտածելակերպը, սովորելու ցանկության բացակայությունը:

Վերլուծելով հարցման արդյունքները, ուսանողների պատասխանները, կարելի է գալ այն եզրակացության, որ ուսանողների մոտ բավականին ցածր է մոտիվացիայի մակարդակը, ինչը հանգեցնում է ուսանողների մեծ մասի ուսման նկատմամբ անտարբերության, ուսումնառությունը միայն գնահատականով պայմանավորելուն, սովորելու ցանկության անկման, պասիվության:

Քննարկմանը մասնակից ուսանողներին մեկնաբանվել են նաև ըստ «ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ի ակադեմիական անազնվության բացահայտման դեպքում նախատեսված պատասխանատվության ձևերը, նաև դրանց կանխարգելման նպատակով իրականացվելիք գործողությունները: Համաձայն կանոնակարգի, ցանկացած համալսարանական, ակադմիական անազնվության դիմելու դեպքում ենթարկվում է պատասխանատվության:

Ըստ հարցման արդյունքների, մասնակից ուսանողների մեծամասնությունը՝ **81%-ը,** մասնամբ կամ ուղղակի տեղեկացված են, որ ակադեմիական անազնվության դրսևորումները պատժելի են: Սրանից իհարկե չի կարելի փաստել, որ նրանք այդ մասին տեղեկացել են կարգից, ոչ թե ուղղակի այդպես են մտածում: Եթե անգամ այդպես են մտածում, այսինքն գիտակցում են, որ ակադեմիական անազնվության կամայական դրսևորում պատժելի է, ուրեմն պետք է բարձրացնել դրա կանխարգելման գործընթացների արդյունավետությունը:



Հարկ է նշել, որ ուսանողներն իրենք գտնում են, որ կանոնակարգում անազնվության տարբեր դրսևորումների համար առաջարկվող տույժերը չեն կիրառվում: Հետևաբար, հարցման արդյունքներում գրանցվել է ակադեմիական անազնվության դիմելու դեպքերի բարձր ցուցանիշ: Այդ խնդրի լուծման շրջանակներում ուսանողներն առաջարկում են խստացնել պատասխանատվության ենթարկելու ձևերը (թե ուսանողների, թե դասախոսների, թե համալսարանի մյուս աշխատակիցների համար) և հետևողական լինել դրանց կիրարկման գործում:

Հանդիպման կարևոր խնդիրներից էր քննարկումների և հարցման միջոցով հավաքել ուսանողների կարծիք-առաջարկները մասնաճյուղում ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացման ու ակադեմիական անազնվության դեմ պայքարելու ձևերի վերաբերյալ՝ կանոնակարգոում փոփոխություններ և լրացումներ կատարելու նպատակով:

Բաժնում ամփոփվել և քննարկվել են ուսանողների կողմից արված առաջարկները և նրանցից առանձնացվել են ուշադրության արժանի մի շարք առաջարկներ:

Ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացման համար 32 ուսանող (հարցման մասնակիցների 68%-ը) կատարել են առաջարկներ, որոնք ամփոփ հետևյալն են.

1. բոլոր տեսակի քննությունները դարձնել բանավոր՝ արտագրության հնարավորությունը կանխելու համար,
2. միջանկյալ քննություններն անցկացնել առանց գնահատականների. ուսանողները պարզապես հնարավորություն ստանան մասնակցելու բանավոր քննություններին,
3. ուսանողները սեմինարների, ռեֆերատների միջոցով դասընթացի համար ձեռք բերեն անցողիկ ութ միավոր,
4. ընթացիկ քննությունների ժամանակ չկիրառվեն թեստեր,
5. քննական հարցաշարում դնել այնպիսի հարցեր, որ հնարավոր չլինի արտագրել,
6. թույլ տալ ուսանողներին օգնել միմյանց,
7. իրականացնել ինտենսիվ ուսուցում, ավելացնել սեմինար դասընթացների քանակը և բարձրացնել ուսուցման որակը,
8. ուսանողների շրջանում ավելի շատ քննարկումներ անցկացնել ակադեմիական ազնվության վերաբերյալ,
9. ակադեմիական ազնվության մասին քննարկումներ անցկացնել նաև դասախոսների հետ,
10. հետևողական լինել ակադեմիական ազնվության նորմերի պահպանման հարցում:

Ուսանողների առաջարկներից կարելի է եզրակացնել, որ նրանք ակդեմիական անազնվության դրսևորման հիմնական խնդիրը տեսնում են ուսանողների գնահատման կարգում, քննությունների իրականացման ձևաչափերում: Սա իհարկե մտորումների տեղիք է տալիս: Նրանց այդ կարծիքները բխում են մրցակցության (ռոտացիայի) առկայությունից, որի պատճառով շատերը

դիմում են անազնիվ տարբեր մեթոդների՝ գնահատական ստանալու համար: Նրանցից 13-ի առաջարկներում կենտրոնական տեղ է զբաղեցնում խստության պակասությունը, 9-ը կատարել են բովանդակային առաջարկներ՝ ավելացնել սեմինար և գործնական դասաժամերը, իսկ 3 ուսանող գտնում է, որ ոչինչ չի օգնի, այսինքն կանխարգելել ակադեմիական անազնվությունը հնարավոր չէ: Վերջին եզրակացությունը մտորելու տեղիք է տալիս ու խոսում իրավիճակը փոխելու նկատմամբ ուսանողների անտարբերության մասին:

Ակադեմիական անազնվության դրսևորումների կանխարգելման համար ուսանողների կողմից կատարվել են հետևյալ առաջարկները.

1. Ակադեմիական անազնվության դրսևորման տարբեր դեպքերի համար սահմանել պատասխանատվության ենթարկելու ավելի հստակ ձևեր,
2. Խստացնել արտագրության համար նախատեսված պատժամիջոցները, օրինակ, ուսանողին 3 անգամ արտագրելու փորձ կատարելու դեպքում հեռացնել համալսարանից,
3. Հետևողական լինել և անպայման կիրառել ակադեմիական անազնվության դրսևորումների համար սահմանված պատժամիջոցները:

Նշենք, որ ուսանողներն ավելի պասիվ են եղել մասնաճյուղի «Ակադեմիական ազնվության կանոնակարգ»-ում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցին պատասխանելիս: Հարցին պատասխանել է 47 ուսանողից 18-ը, և որոնց ճնշող մեծամանության (12 ուսանող) կարծիքով ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգը փոփոխության կարիք չունի, պարզապես անհրաժեշտ է հետևողական լինել և կիրարկել այն:

Ամփոփելով հանդիպման և հարցման արդյունքները և նպատակ ունենալով բարձրացնել ակադեմիական ազնվության կանոնակարգի մասին տեղեկացվածության մակարդակը ՄԿՈԱ բաժինը առաջարկում է.

- աջակցել ֆակուլտետների դեկաններին և ուսումնական խորհրդատուներին՝ ուսանողներին (մասնավորապես առաջին կուրսի ուսանողներին) ակադեմիական ազնվության կանոնակարգին ծանոթացնելու գործընթացում,
- պարբերաբար կազմակերպել հանդիպումներ դասախոսական կազմի հետ և քննարկել ակադեմիական ազնվության մակարդակի բարձրացման գործում նրանց գործունեության հետ կապված հարցեր, մասնավորապես լինել ավելի ուշադիր, անաչառ, անկողմնակալ, խստացնել հսկողությունը, աչք չփակել ուսանողների կողմից ակադեմիական անազնվության դրսևորումների նկատմամբ,
- վերանայել քննության ներկայացվող տոմսերը, ներառել հիմնականում վերլուծական հարցեր,
- մշակել ուսանողների մոտիվացիայի բարձրացման մոտեցումներ,
- ակադեմիական ազնվության կանոնակարգում վերանայել ակադեմիական անազնվության դրսևորման դեպքում պատասխանատվության ենթարկելու ձևերը (կանոնակարգի 4-րդ կետի 3,4 ենթակետեր),
- կազմել էթիկայի կանոնագիրք, որը ներառի ակադեմիական ազնվություն և անազնվություն գաղափարների սահմանումները, անազնվության կանխարգելման ձևերը, էթիկայի նորմերը և էթիկական վարքգծի կանոնները:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին